

բան անդ գրեթէ կէս կրամի չափ կ'առնուն, բայց ժամանակաւ քանակութիւնն այնչափ կը շատցընեն, որ մէկ նստով՝ չորս գնդակ կրնան կլել, որոնց ամեն մէկը ձիթապողէն աւելի մեծ է:

Գաւաթ մը ջուր այս նորանշան ճաշը կը փակէ եւ հասարակօրէն ժամ մը վերջը՝ երջանկացօցիչ թմբուածեան արդիւնքը կը սկսի:

Հ. Գ. Բ.



Բ Ա Ն Ա Ս Տ Ե Դ Թ Ա Կ Ա Ն

Ն Ի Գ Ե Ն

Մութ էր գիշեր, լուսին կամար ուր շողերովքն աննամար, Հազիւ ունէր աղօտ լոյս՝ կար, Մեղմն գնդիս թանձոր խաւար:

Որտընդրստ անդ փայլակ ծնդրէր անտատ ու սեւ թաւուտք... Անձրեւի մեծ կիճնէր կայլակ Յարեւելքէն դէպ արեւմուտք:

Ճայթ... Ինկաւ շանթ՝ հարցատին տան Մեծահանդէս ուր կայ սեղան... Արեւմտեան երկինք կարմրեցաւ. Խնձորն փոխուէր ի սուգ ու ցաւ:

Բոմբին լուէր թնդանթի... Գոռէ մննչէ գիշերասպան. «Հրդեհ, հրդեհ, ի Բանկալթն»: Պատէ զամէք սարսափ ու ան:

Ամնուրեք տիբէ խոր մութ, Լսուին լալիւնք, ողբ ու հառաչ... Մինչդեռ կարծես. կրակին անզուժ Չայն մը գոռէ. «Յառաջ, յառաջ»:

Միշտ դէպ յառաջ վազին բոցեր Լափեն անյազ, կ'ընեն աւար Հարստին տուն. բայց են խոցեր Դաղքատին սիրտ անզրթմաբար:

Հանգչի հրդեհ ժամէ մ' հազիւ, Երբ թէ յոգնած իւր աւարէն: Ո՛ր են սպաւտք, հարուստ. հացի՛ Աւարիւ ոչ ունիս սպարէն:

Գուն սիզութեամբ ժամ մը յառաջ Յղփանայիր յառատ սեղան Մերժեցիք, սէզ, այրոյն հառաչ, Տես թո տընք, աւեր եղան:

Բանկալթի, Սեպտ. 1895:

ԺԻԾԱՌՆ.



Ո Ւ Ղ Ե Գ Ր Ա Կ Ա Ն

Ս Ե Ի Թ Ո Վ Ո Ւ Թ Ո Ւ Ս Ե Կ Ա Ն Ե Ջ Ե Բ Բ Ը

(Հորհուրդի մասին Եւրոպայի ԻՍ.)

Սոցիալիստական Լոգարանները:

Բայ ի իւր առեւտրական առաջնակարգ գիրքէն, մաքրութենէն ու գեղեցկութենէն, Օդէսա նշանաւոր է նաեւ իր լողարաններովը, որոնք այստեղ ծանօթ են լե՛սն անուամբ (ЛИМАНЪ-ծովախորշ) եւ հռչակուած են ոչ միայն բովանդակ Ռուսաստանի, այլ եւ Եւրոպայի մէջ: Ամէն տարի Ռուսիոյ բոլոր ծայրերէն հիւանդներ իրենց ցաւերուն բուժումը փնտռելու համար կը վազեն կու գան հոս մեծ բազմութեամբ, եւ ցանցառ չեն կատարեալ առողջանալու դէպքեր:

Լիմանները քաղաքէն դուրս են եւ 3 հատ են Անտրէիվսի կամ Կոնտէնցիէ, Հ-Վէբէյսիէ եւ Սոնայ (Չոր): Առաջին երկու խորշերը զուգահէտաբար ներս են մտած, նեղ եւ մանուածապատ կերպով: Երկուքին մէջ դառնուած ցամաքը ըլլի ձեւով կը բարձրանայ եւ ծովուն մէջ խրելով հրուանդան մը կը ձեւացընէ, բայց եղբրը շատ բարձր չէ, այլ հազիւ 3—5 սաժէն: Այստեղ ամբողջ ծովեղբրը կազմուած է խոշոր աւաղէ, ուլաինջի (moule, միդիէ) յղկուած կտորներէ եւ կաւէ:

Այս լե՛սնէրը ոչ խորշ են իսկապէս, ոչ լիճ, որովհետեւ պարզապէս ծովուն մէկ մասը կը կազմեն, բայց ծովէն փոքր հողաշերտով բաժնուած: Ծովուն ալիքներն ինչպէս կ'երեւայ՝ յառաջ խաղալով շարունակ այս եղբրին մէջ, հետզհետեւ աւելի եւ աւելի թափանցեր են անոր ստորին մասերը: Ալիքները ծովային աւազը բերեր լեցուցեր են ձորերուն երկու կողմն, եւ այս կերպով որոշ խաւեր են կազմեր, որոնք, հիմայ ալ միշտ աւելնալու վրայ են: Այսպիսի երկու խաւեր մեծնալով՝ երկու կողմանէ իրարու մօտեցեր են եւ թումբ գառնալով, ցամաքի մէջ մտած ջրին առջեւ կտրեր են: Թումբէն ներս մնացած ջուրը այն տեղ՝ ուր գետինը բարձր է եղեր եւ ջուրը ցած, հետզհետեւ շոգիանալով՝ պահեր եւ վերջապէս անհետացեր է. իսկ ուր որ հողը ցած էր եւ ջուրը խոր՝ այնտեղ ծովային ջուրը լիճ մնացեր է եւ ձեւացուցեր է այժմեան լիմանները: Ուստի այս պատճառաւ լե՛սն առեւծը թէեւ լիճ կը ձեւացընէ բայց ճշգրտօքն՝ ծովախորշ է միայն, աւազային եւ կաւային թումբով ծովէն բաժնուած: Անգրիեվսի լիմանին մէջ այս ցամաք անջրպետ կամ թումբը 1 1/2 քիլոմէտր տարածութիւն է միայն, իսկ Հալիբէյի մէջ 4 քիլոմէտրը կ'անցնի: Բայց ծովային ջուրն այս երկու լիմաններուն մէջ միեւնոյն հանգամանքը չունի: Անգրիեվսիի ազային մասն աւելի է քան միւսներունը: Այս լիմանը՝ իր ջրի յատկութեամբ կը հաւասարեցընեն Եւրոպայի ծանօթ առողջարար ջրերուն, ինչպէս Բադըն-Բադընի, Սոդէնի, Էլբայի, Գալլէի, Կարլսբադի հետ են: Լիմաններու մէջ բաղնիք անելու կերպն եւ աստիճանը բնականաբար պէտք է որ բացարձակապէս բժշկաց խորհրդով կատարուի. բայց աւելորդ չենք համարիր յիշել այստեղ այն հիւանդութիւն-